ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2023 թվականի N 820 - Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 24-Ի N 400-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, «Արդյունաբերական քաղաքականության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի նոյեմբերի 18-ի N 1902-Ա որոշման «Էկոնոմիկայի նախարարություն» բաժնի 5.3-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի մարտի 24-ի «Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման և (կամ) Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման նպատակով բեռների՝ լաստանավով (լաստանավերով) տեղափոխման դեպքում առաջացած լրացուցիչ ծախսերի նվազեցմանն ուղղված միջոցառմանը հավանություն տալու մասին» N 400-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) վերնագիրը «(ԼԱՍՏԱՆԱՎԵՐՈՎ)» բառից հետո լրացնել «ԵՎ (ԿԱՄ) ԲԵՌՆԱՐԿՂԵՐՈՎ (ԿՈՆՏԵՅՆԵՐՆԵՐՈՎ) ԲԵՌՆՎՈՂ ՆԱՎՈՎ (ՆԱՎԵՐՈՎ)» բառերով:

2. Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման և (կամ) Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման նպատակով բեռների՝ լաստանավով (լաստանավերով) և (կամ) բեռնարկղերով (կոնտեյներներով) բեռնվող նավով (նավերով, այսուհետ՝ նավ (նավեր)) տեղափոխման դեպքում առաջացած լրացուցիչ ծախսերի նվազեցմանն ուղղված միջոցառմանը՝ համաձայն հավելվածի։»։

3. Որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետում «լիազոր ու» բառերը հանել և «մարմինների» բառը փոխել «մարմնի» բառով։

4. Որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«2) օպերատոր է հանդիսանում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից ճանաչված իրավաբանական անձը կամ անհատ ձեռնարկատերը, և վերջինս պետք է կնքի սույն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված պատասխանատու մարմնի հետ սույն որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պայմանագիրը։»։

5. Որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետը «իրականացման» բառից հետո լրացնել «պատասխանատու» բառով։

6. Որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1) սույն որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետով սահմանված պատասխանատու մարմնի և օպերատորի միջև կնքվելիք պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության համապատասխան որոշման նախագիծ.»։

7. Որոշման 3-րդ կետի 4-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել։

8. Որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի։

9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

26.05.2023

ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ